AMINTAS GROUP

# ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԱՄԻՆՏԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 2024

*«ՀՀ ԱՆ ՀԿԱԾ» Արարատի և Վայոց Ձորի մարզային*

*բաժնի հարկադիր կատարող Ա.Գաբրիելյանին*

*Հարգելի՛ պարոն Գաբրիելյան*

Ի պատասխան Ձեր՝ 07.11.2023թ. թիվ 4672 (կատարողական վարույթ՝ ) գրության, Ձեզ ենք ներկայացնում ՀՀ մարզ Արարատ համայնք Շահումյան հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը:

**Հարգանքներով՝**

ՏՆՕՐԵՆ՝ Մ. Հակոբյան

23.04.2024թ.

AMINTAS GROUP

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Գ/Վ-ԴՄ102*
*23.04.2024թ.*
*«ՀՀ ԱՆ ՀԿԱԾ» Արարատի և Վայոց Ձորի մարզային*
*բաժնի հարկադիր կատարող Ա.Գաբրիելյանին*

*Հարգելի՛ պարոն Գաբրիելյան*

Համաձայն 11.07.2023թ.-ին կնքված թիվ ՀԿԱԾ-ԱՄԳ/ԱԳԳԾ-23/1 պայմանագրի և ի կատարումն Ձեր 07.11.2023թ. թիվ 4672 (կատարողական վարույթ՝ 11244404) գրության, Ձեզ ենք ներկայացնում ՀՀ մարզ Արարատ համայնք Շահումյան հասցեում գտնվող հողամասի սեփականության իրավունքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը:

Գնահատման ներկայացված հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 21072021-03-0016, հաստատված 21.07.2021թ.) սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի :

Համաձայն գնահատման ՀՀ մարզ Արարատ համայնք Շահումյան հասցեում գտնվող 6094.0քմ մակերեսով հողամասի սեփականության իրավունքի շուկայական արժեքը առ 23.02.2024թ. կազմում է **2,300,000 (երկու միլիոն երեք հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Կից ներկայացվում է գնահատման ներկայացված անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը կազմված 19 էջից:

**ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝**

ՏՆՕՐԵՆ՝ Մ. Հակոբյան

ԳՆԱՀԱՏՈՂ Հ. Ղասաբյան
Վկայական ԳԳ-2022-65

Գնահատումը իրականացվել է Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին «Հայաստանի Հանրապետության օրենքի», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման ստանդարտի» պահանջներին համաձայն:

Արցախի փողոց 23/6
«ՏՈՒՆ ԴԵՊՈ» համալիր
Էլ. փոստ amintasgroup@mail.ru

Հեռ (010) 43 22 76
Բջջ. (094) 43 22 76
Բջջ. (096) 43 22 76

AMINTAS GROUP

## 1.7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԺԵՔԻ ՏԵՍԱԿԸ

**Գնահատման արժեքի տեսակը վերոգրյալ հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքի որոշումն է տեղազննության օրվա դրությամբ:**

Սույն հաշվետվության մեջ *"ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔ"* հասկացությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

*Շուկայական արժեքը հաշվարկային դրամական մեծություն է, որով հավանաբար կիրականացվեր, գնահատման ամսաթվի դրությամբ, շահագրգիռ կողմերի միջև, բաց և մրցակցային շուկայում գնահատվող օբյեկտի փոխանակում, որի պարագայում կողմերից յուրաքանչյուրը, իրազեկված լինելով, գործում է ողջամտորեն և առանց հարկադրանքի:*

## 1.8. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Գնահատման աշխատանքների ընթացակարգը բաղկացած է հետևյալ հաջորդական փուլերից. նախապատրաստական փուլ և հիմնական փուլ :

1) **Նախապատրաստական** փուլում իրականացվում է՝

ա. գնահատվող օբյեկտի փաստաթղթերի հավաքագրում և ուսումնասիրություն, պատվերի ընդունում,

բ. գնահատման առաջադրանքի ձևակերպում և պայմանագրի կնքում:

2) **Հիմնական** փուլում իրականացվում է՝

ա. գնահատվող օբյեկտի տեղազննում (լուսանկարում) (կախված գնահատվող օբյեկտի տեսակից),

բ. գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և վերլուծություն,

գ. գնահատման համապատասխան սկզբունքների, մոտեցումների և մեթոդների ընտրություն,

դ. գնահատում՝ ընտրված մոտեցման (կամ մոտեցումների) կիրառմամբ,

ե. վերջնական արդյունքի հաշվարկման նպատակով տարբեր մոտեցումներով հաշվարկված արդյունքների համադրում,

զ. հաշվետվության կազմում և տրամադրում

## 1.9. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատվող հողամասը գտնվում է ՀՀ մարզ Արարատ համայնք Շահումյան հասցեում:

https://www.google.com/maps/place/39%C2%B055'45.1%22N+44%C2%B034'11.8%22E/@39.9252866,44.5485485,12.96z/data=!4m4!3m3!8m2!3d39.929195!4d44.569931?entry=ttu

## ՀՀ քարտեզը, որտեղ գտնվում է գնահատվող հողամասը




## 1.10. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գնահատման է ներկայացված հողամասի սեփականության իրավունքի ամբողջ փաթեթը:

| Անվանումը | Հողամաս |
|---|---|
| Հասցեն | ՀՀ մարզ Արարատ համայնք Շահումյան |
| Վկայականի համարը և հաստատման ամսաթիվը | 21072021-03-0016, հաստատված 21.07.2021թ. |
| Սեփականատեր | |
| Իրավունքի տեսակը | սեփականություն |
| Նպատակային նշանակությունը | գյուղատնտեսական |
| Գործառնական նշանակությունը | վարելահող |
| Հողամասի մակերեսը | 6094.0 քմ |
| Կադաստրային ծածկագիրը | 03-074-0214-0002 |
| Լրացուցիչ տվյալներ | հողամասը հարթ է, ջրովի |
| Տրանսպորտային մատչելիությունը | միջինից բարձր |

Ստորև ներկայացվում է գնահատման ներկայացված հողամասի որոշ լուսանկարներ.